Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի
2024-2025 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
9 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. Ուրմիան ներկայումս Հայկական լեռնաշխարհում հայելու մակերեսով ամենամեծ լիճն է
բ. Վանա լիճը Սևանա լճից ավելի բարձրադիր է
գ. Ուրմիա լիճը միջինում ավելի խորն է, քան Սևանա լիճը
դ. Վանա լիճն Ուրմիայից ավելի աղի է
ե. ՀՀ բնակչության կազմում 80+ տարիքային խմբի բնակչության թիվը գերազանցում է 0-1 տարեկան խմբի բնակչությանը
զ. ՀՀ բնակչությանը բնորոշ է ազգի ծերացման երևույթը
է. ՀՀ բնակչության կազմում մինչև 20 տարեկան տարիքային խմբերում տղաները թվապես գերակշռում են աղջիկների նկատմամբ
ը. Վերջին երկու տարիներին ՀՀ մշտական բնակչության թիվը նվազել է

2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը 1միավոր

ա. մայրցամաքային ծանծաղուտ բ. իզոբաթ

3. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

Այս գաճաճ, ներցամաքային դիրք ունեցող սահմանադրական միապետության բնակչության գրեթե կեսը օտարերկրացիներ են: Չնայած ունի սեփական ազգային լեզուն, սակայն շատ կիրառական են երկու խոշոր հարևանների պաշտոնական լեզուները: Այն նաև Հյուսիսատլանտյան դաշինքի հիմնադիր անդամներից է:

4. Ինչպե՞ս են կոչվում.

ա. Գիտական, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտները 1միավոր

բ. Պետական կառուցվածքի այն ձևը, որում վարչաքաղաքական միավորները ունենում են որոշակի ինքնուրույնություն 1միավոր

5. Խնդիրներ

ա. Օդի բացարձակ խոնավությունը 15գ/մ^3 է, իսկ հագեցման համար անհրաժեշտ է ևս 5գ/մ^3 ջրային գոլորշի: Որքա՞ն է օդի հարաբերական խոնավությունը 1միավոր

բ. Ա երկրի բնակչության թիվը 3մլն էր, իսկ ուրբանիզացման մակարդակը՝ 70%: Մեկ տարվա ընթացքում քաղաքներում ծնվել է 5հզ երեխա, մահացել է 15հզ մարդ, իսկ գյուղերում ծնվել է 25հզ երեխա և մահացել է 15հզ մարդ: Որքա՞ն է դարձել ուրբանիզացման մակարդակը այդ տարվա վերջում, եթե տարվա ընթացքում 40հզ մարդ գյուղերից տեղափոխվել է քաղաք: 1միավոր

6. Ելնելով Հարավային Կորեայի արտահանման կառուցվածքում տարբեր ապրանքների բաժնի վերաբերյալ տվյալների շարքից՝ մեկ տրամագրում գծեք այդ ապրանքների դինամիկայի կորերը (1միավոր) և պատասխանեք հարցերին:

Տարեթիվ	1990	1995	2000	2005	2010	2015	2020
Արտահանման կառուցվածքում նշված արտադրատեսակների բաժինը (%)							
Տրանսպորտային միջոցներ	9.8	12.9	14.2	19.4	21.9	20.9	14.7
Էլեկտրատեխնիկա և մեքենաշինական այլ արտադրանք	29.1	40.3	44.2	41.9	34.9	37.7	44
Տեքստիլ և հագուստ	25.9	15.6	11.2	5.1	3.1	2.8	2.2

ա. Ո՞ր ապրանքի բաժնի տատանման լայնույթն է եղել ամենամեծը և որի՞նը՝ ամենափոքրը: Նշել տատանման լայնույթի արժեքները 1միավոր

բ. Ո՞ր հնգամյակում է գրանցվել արտահանման կառուցվածքում ծանր արդյունաբերության արտադրանքի բաժնի ամենամեծ բացարձակ աճը և որքա՞ն է փոփոխվել թեթև արդյունաբերության արտադրանքի բաժինը նույն ժամանակահատվածում 1միավոր

7. Դասավորել ՀՀ քաղաքներն ըստ դրանցում թափվող տարեկան միջին տեղումների աճող հաջորդականության. Մեծամոր, Մարալիկ, Ստեփանավան, Վայք 1միավոր

8. Կարճ պատասխանով հարցեր: Յուրաքանչյուրին տրվում է զումարային 1 միավոր

ա. Ո՞ր բնակավայրն է Հայկական լեռնաշխարհի ցրտի բևեռը (0.5միավոր) և որո՞նք են գրանցված ցածր ջերմաստիճանների երկու հիմնական պատճառները (0.5միավոր):

բ. Աշխարհի հացահատիկի բերքի մեծ մասը ո՞ր բնական զոնայի տարածքում է աճեցվում (0.5միավոր): Նշել տվյալ բնական զոնային ամենաբնորոշ հողատեսակը (0.5միավոր):

9. Ուսումնասիրեք Սևանա լճի ջրային հաշվեկշռի պատկերը և պատասխանեք հարցերին.

ա. Որքա՞ն է կազմել տվյալ ժամանակահատվածի համար լճի հաշվեկշիռը արտահայտած սմ-ով (0.5միավոր):

բ. Արդյունքում որքա՞ն ջուր է ամբարվել լճում, եթե յուրաքանչյուր սանտիմետրը համարժեք է մոտ 13մլն մ³ ջրին (0.5միավոր):

գ. Ո՞րն է ջրառի գլխավոր նպատակը (0.5միավոր): Ինչպե՞ս կարելի է նվազեցնել Սևանա լճից ջրառը՝ առանց վնասելու այդ նպատակի իրականացմանը (նշել երկու եղանակ) (0.5միավոր):



10. Պատասխանեք հարցերին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները

ա. Տարվա ո՞ր եղանակին է Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության գործում Մեծամորի ատոմակայանի դերը նվազում և ինչու՞: 1միավոր

բ. Աշխարհի ո՞ր տարածաշրջանում է ծովային փոխադրումների դերը ամենացածրը: Ինչու՞ է այդպես 1միավոր

11. Ներկայացված բնութագրերը համապատասխանեցնել քարտեզում 1-10 թվերով նշված օբյեկտներից ութին (օր.՝ Ա-1): Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0.25միավոր

Ա. Եվրասիայի ամենաբարձր գործող հրաբուխն է:

Բ. Վերջին երկու հարյուր տարվա ընթացքում ամենահզոր ժայթքումն այստեղ է եղել:

Գ. Միայն տվյալ երկրի ամենաբարձր կետն է:

Դ. Այս հրաբխի վերջին ժայթքումը սկսել է 13 օր առաջ:

Ե. Միաժամանակ երեք երկրների ամենաբարձր կետն է:

Զ. 1991թ.-ի ժայթքումից հետո բարձրությունը կրճատվել է գրեթե 300մ-ով:
Է. Իր աշխարհամասում ամենաշատ մարդկային զոհեր պատճառած հրաբխային ժայթքումը:
Ը. 1987թ.-ից այս լեռը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում է:



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան